# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

## ՄԱՅՐ-ԱԹՈՌԻ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ·

Ա.—Ներկայ ուսումնական տարին այստեղ՝ Ս. Էջմիածնում նոր աշակերտների ընդունելութիւն լինելու չէ։

Վեհափառ Հայրապետի հրամանով նոր աշակերտների ընդունելութիւնը կատարուելու է նոցա բնակութեան տեղերում յատուկ նշանակուած պաշտօնեաների կամ հոգեւոր իշխանութեան տեղական ներկայացուցիչների միջոցով, որոնք կառաջնորդուին վարչութեան սահմանած հրահանգով։

Բ.—Թեմական դպրոցներից լսարան մտնել ցանկացող աշակերտները պէտք է քննուին Սեպտեմբերի 1-ին հետեւեալ առարկաներից։

1. Եկեղեցական պատմութիւն Հայոց.
2. Քրիստոնէական վարդապետութիւն Հայոց.
3. Սրբազան պատմութիւն Հին և Նոր Կտակարանաց։
4. Ծանօթութիւն Աւետարանացն Ղուկասու, Յովհաննու և Գործոց Առաքելոց.
5. Հայոց լեզու, գրաբար շարադրութիւն.
6. Ռուսաց լեզու, շարադրութիւն.
7. Ֆրանսերէն թարգմանութիւն.

Գ.—Վեհափառ Հայրապետի հրամանով առաջիկայ ուսումնական տարին ճեմարանիս մէջ երթեւեկ աշակերտներ լինելու չեն։

Երթեւեկներից նոքա, որոնք կամենում են գիշերօթիկ լինել, պարտաւոր են խնդրամատոյց լինել Վարչութեան՝ ներկայացնելով չքաւորութեան վկայական, և կենթարկուին առանձին քննութեան։

Դ.—Կարող են ընդունուիլ և թոշակաւոր աշակերտներ, վճարելով տարեկան 200 րուբլի։

Ե.—Ճեմարան մտնել ցանկացողները պէտք է ներկայացնեն գրաւական. Կովկասի շրջանից եղողները՝ 50 րուբլի, իսկ միւս տեղերինը՝ 75 րուբլի*։

Զ.—Ներկայ ուսումնական տարին նոր աշակերտների ընդունելութիւն լինելու չէ Երեւանի և Տփխիսի թեմից*։

Նոր աշակերտների ընդունելութիւն կը լինի Արցախի թեմի գիւղերից, Պարսկաստանից և Տաճկաստանից։

## ԱԼԱՇԿԵՐՏԻ ՀԱՅՈՑ ԱՌԱԾՆԵՐԸ·

Խօզի (աղոց) չմեռով հոր մի մտնի.

Ծուռ մէկ քար գլորեց հոր, հազար գիտուն չկրնան հանել.

Կերաւ կուզ, ուռաւ աղուէս, աչք էլաւ տատրկուն.

Կնկայ ֆէլ (կիրք, նախանձ, հնարագիտութիւն), շատնիր սէլ.

Կոտ մը կորեկին լէ գից ու կարմինջակ պէտք ա.

Կորեկին որ թորկին, չուր Երուսաղէմ կերթայ ուխտ.

Հազար կը մեռնի, մէկ չշուարի, մէկ կը մեռնի, հազար կը շուարի.

Հարկը զօրէնք կը պդլայ (կուրէ).

Հարսնեատուն չմտնողը փախ (պարելով մի շրջան կատարել) մէլ էվել կը խաղայ.

Հարսի հէրը, մէրը դռան տակն ա հորած.

Ջեռաց հանգուրձ ընկաւ ակռէք.

Ջին ի ձին կապին, եա աղցան կիգայ, եա կծան.

Ղասապ ուր ծրագուն կիլայ, էծ զարե.

Ճանճի էգած բան մը չէ, հըմա օր պատաւ մըջ քասին, մարդու իշտահ կը տըրայ.

Ճնճուղն օր ճնճուղ ա, էլման ուրին կը թալայ փչի հով (հովանաւորութեան ներքոյ).

Ճրագով կոլոտէնք (կորնէկ) անճրագ գտայ.

Մ՚վախնար զմզմփան գետէն, վախցիր մարմանդ գետէն.

Մէկ զանգակ կեղնի, մէկ բանբակ.

Մէկի աչքն ա էլեր, էն մէկել լէ կըսայ.—տուր տանիմ կատուխս.

Մէկ հաւկիթ կէնիմ, ջըմեն կը զարկիմ պատ

Մուկը ուր դուռ առուծ ա.

Յուշիկ քէլիմ կըսին կամկառ, շուշուտ քէլիմ կըսին շիթառ.

* Ծանօթ.—Ճեմարանում գտնուած այն աշակերտները, որոնք գրաւական չունին, Սեպտեմբերին անպատճառ Վարչութեանը պիտի ներկայացնեն.

* Թեմական Դպրոցներից աւարտողները և լսարան մտնողները չեն ենթարկւում այս կանոնին.